



Հայաստանում աճեցվող
կեռասի տեսակները
և
դրանց պահպանման անհրաժեշտությունը



Հագարավոր տարիներ առաջ, մրգեր աճեցնողները Հարավային Կովկասում սովորել են ինչպես տեղափոխել մրգերի ծառերը (որոնք աճում են վայրի տեսակներով սարերում) դեպի դաշտեր և այգիներ, մոտ այն բնակավայրերին, որտեղ մարդիկ ապրում էին: Այս մրգեր աճեցնողներն անգամ բարելավել են պատվաստման արվեստը: Փաստերը ցույց են տալիս, որ տեխնիկան իրականացվում էր տարածքում 6000 տարի առաջ:

Քանի որ երկրի մեծ մասը լեռնային է, միրգ աճեցնողները ստեղծում են տարածքներ՝ աճեցնելու համար իրենց խաղողի որթերն ու մրգերի ծառերը և ընտրված տեսակները, որոնք կծաղկեն լեռնային տարածքներում: Մինչ տասնութերորդ դարը մրգերի



տեսակներն աճում էին Հարավային Կովկասում, որտեղ մեկուսացված էին գենետիկական ազդեցություններից: Տասնիններորդ դարում, եվրոպայում նոր մշակության և արտադրության

տեխնիկաները զարգացել էին և առաջնային ուսումնասիրությամբ գենետիկական բարելավման, եվրոպական տեսակները սկսեցին փոխարինել տեղական մրգերի տեսակներին:

Որոշ ժամանակ առաջ մրգերի վայրի տեսակների մշակումը, որը միշտ եղել է մասնավոր սեփականության առարկա փոքր այգիներում, մեծապես լքվեց ի օգուտ՝ համեմատաբար բարձր մշակման ավելի նեղ տեսակների համար: Առավելություններ ստեղծվեցին մրգերի մշակությունում. հատուկ ագրոնոմիկ գենետիկայի և բիոքիմիական ասպեկտներ:

Սա հանգեցրեց թե՛ հասանելի տեղական սերմերի պլազմաների աճին, թե՛ նոր տեսակների ներկայացմանը: Այնուամենայնիվ այս գործընթացն ունեցավ թանկ ազդեցություն, քանի որ կորսվեցին տեղական ավանդույթները և գիտելիքները, վերջիններս տեղ չունեին այս նոր կուլեկտիվ գյուղական հասարակությունում: Որոշ օրինակներ հետևում են մրգերին, որոնք մշակվել են Հայաստանում նախնադարյան ժամանակշրջանից:

Ընդհանուր տեղեկություններ

Prunus avium-ը, նույն ինքը կեռասենին՝ հայտնի է ինչպես վայրի բալ. միջին չափի, արագ աճող և համեմատաբար քչակյաց ծառ է: Կեռասենու ծառն ունի նույն բալենու

տեսքը: Ենթադրվում է, որ այն հայտնի է եղել Անատոլիում, Եվրոպայում՝ Դանիայում և Շվեյցարիայում դեռևս մ.թ.ա. 8000 թվականից: Իսկ ահա լատիներեն անվանումը ձեռք է բերել հետևյալ կերպ. Կեռասունտ քաղաքը գտնվել է Տրապիզոնից ոչ հեռու, ահա այստեղ են հռոմեացիներն առաջին անգամ տեսել իրենց անհայտ պտղատու ծառեր, որոնք անվանել են լատիներեն *cerasi*: Այստեղից էլ իտալերեն *ciliegi*, ֆրանսերեն՝ *cerise*, իսպաներեն *cereza*, գերմաներեն *Kirsche*, անգլերեն *cherry*, ռուսերեն *черешня*:

Վայրի տեսակները պատկանում են *avium*-ի տիպիկ ենթատեսակներին, որտեղ մշակված ձևերը հաստատվում են որպես ենթատեսակներ՝ դուրասինա (*duracina*) և ջուլիանա (*juliana*): Վաղ լայն սպիտակ ծաղկիկները խմբված են ճյուղերին և տալիս են ուտելի կարմրավուն փոքրիկ կորիզավոր դառը-քաղցր համ ունեցող պտուղներ: Բնի կեղևը գորշասպիտակավուն է: Բարձրությունը՝ մինչև 15 մ: Երկարակյաց է (մինչև 100 տարի և ավելի): Տերևները պարզ են, խոշոր, երկար, ձվաձև, սուր ծայրամասով, ատամնաեզր: Ծաղկաբույլը նոսրածաղիկ հովանոց է, ծաղիկները՝ խոշոր, սպիտակ, երկար կոթուններով, երբեմն՝ մեկական: Ծաղկում է ապրիլ-մայիսին: Պտուղներն օգտագործվում են թարմ, չորացած և վերամշակված (կոմպոտ, մուրաբա, ջեմ, զովացուցիչ ջրեր): Կեռասենին բազմանում է պատվաստներով և մացառներով:

Բերքատվությունը 70-80 գ/հա է: Մշակվում է Ուկրաինայի հարավում, Եվրոպայում, Մոլդովայում, Կովկասում, միջինասիական

հանրապետություններում: Պտուղները պարունակում են շաքարներ, ազոտ և այլ նյութեր, օգտագործվում են թարմ և



վերամշակած վիճակում (մուրաբա, կոմպոտ, հյութ, ջեմ, գինի, չիր, շաքարաչիր և այլն): Կորիզի միջուկը պարունակում է յուղ, որն օգտագործվում է օժանդակիչ արտադրության, բնափայտը՝ ատաղձագործության մեջ: Ծառի



առավելությունը կայանում է նրա բավականին երիտասարդ տարիքում պտուղ տալու հետ, սակայն ապրում է կարճ մյուս ծառերի հետ համեմատած՝ 100 տարի, ջերմա-լուսա խոնավասեր է: Բազմանում է արմատներով, սերմերով և արմատային մացառներով, ինչի հետ մեկտեղ մեղրատու է:

Պտուղը տարբեր մեծության, հյութալի, կլոր, երբեմն՝ բութ, սրտանման կորիզապտուղ է, կարմիր, վարդագույն, դեղին, սև գույնի: Պտղահյութն անգույն է, երբեմն մուգ կարմրավուն, քաղցր, քաղցրաթթվաշ, թույլ տոտիպությամբ: Վայրի բալը հանդիպում է որպես փոքր մասնիկ շատ տեսակների համար բարեխառն

անտառներում: Վայրի տեսակը հիմնականում Եվրոպական տեսակն է և հանդիսանում է մշակվող տեսակների նախնին: Շատ տարածված դեկորատիվ մրգային ծառ է և պինդ կարմրադարչնագույն փայտը Եվրոպայում ամենաարժեքավոր փայտերից մեկն է համարվում: Ամռանը տերևները փոխում են գույնը բաց կանաչից, գարնանը դառնալով մուգ կանաչ և աշնանը դեղին կամ վարդագույն: Վայրի բալենու ծաղիկները հասնում են մոտավորապես 2-2.5սմ-ի, սպիտակ, միջատների կողմից փոշոտվող, հիմնականում մեղուների կողմից, վայրի մեղուների և այլն, իսկ ծառերը հիմնականում ինքնուրույն բեղմնավորվող չեն: Առանձին ծառեր ունեն համեմատաբար կարճ կյանք՝ 100-120 տարի ամենաշատը և կարող են սկսել ծաղկել 10-15 տարեկանում: Կենտրոնական Եվրոպայում ծաղկումը սկսում է մարտի վաղ սկզբում և տեղի է ունենում մինչև մայիսը, մինչև անհատական ծառեր արդեն մեկ շաբաթական ծաղկած են: Մրգերը մուգ կարմիր սևին խփող գույն ունեն: Կորիզը հանած պտուղներ հանդիպում են վաղ գարնանից մինչև ամառը և սպառվում են ու ցրվում հիմնականում թռչունների կողմից, օրինակ՝ աղավինների, ծիծեռնակների և այլն, սակայն երբեմն նաև խոշոր բուսակերների կողմից՝ աղվեսների, փորսուղների, վարազների և այլն:

Prunus avium-ի տարածումը տեղի է ունենում բնականորեն բարեխառն անտառներում՝ Եվրոպայում, Անատոլիայում և Հյուսիսային Աֆրիկայի որոշ տարածքներում, արևմտյան Ասիայում: Տարածման տարածքները մեծանում են դեպի Բրիտանական կղզիների հյուսիսային հատվածներում և Սկանդինավիայի հարավային շրջաններում, որտեղ դժվար է առանձնացնել տեղական պոպուլացիաները արհեստական ստեղծվածից: Հյուսիսային բնական շրջանները սահմանափակվում են հյուսիսիային հասարակածի 55°: Հարավում շրջանը հասնում է մինչև Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Իսպանիա, կենտրոնական Իտալիա և Բալկաններ: Այս տարածքներում խիստ սահմանափակվում են խոնավ պայմաններում ավելի ցրված բարձրադիր պոպուլացիաները: Արևելյան բնական շրջանները ներառում են Կովկասը և Էլբուրսի լեռները Հյուսիսային Իրանում, որտեղ տեսակները հանդիպում են 2000մ բարձրության վրա: Ալպերում հանդիպում է 1700մ-ի վրա ու հասնում է հարավ-արևելյան Ֆրանսիայում մինչև 1900մ: Ամենաբարձր, լեռնային տարածաքներում կեռասենի հաճախ հանդիպում է փնջերով: Կեռասենու տարածման սահմանափակող գործոնները հիմնականում կապված են ամառային սեզոնին անձրևների մեծ քանակությամբ՝ հարավում և հյուսիսում սառը պայմաններում: Բացի տարածման բնական սահմանափակումներից, այս Prunus-ը լայնորեն տկնվում է և

արհեստականորեն ֆիքսվում անցողիկ անտառներում և խիտ հողերում, հատկապես հյուսիսային Ասիայի բարեխառն հատվածներում և Հյուսիսային Ամերիկայում:

Բնակությունը և էկոլոգիան:
Կեռասենին մետֆիտիկ է, համեմատաբար ծանծաղ արմատային համակարգ ունեցող, լույս պնդող տեսակներից, որոնք կարող են աճել հողային տարբեր կառուցվածքներում: Այունամենայնիվ այն օգնում է խորը



բարեբեր հողերին ջրի լավ մատակարարմամբ: Ծառը չի հանդուրժում ծանր կավը, ճահճացված կամ աղքատիկ ջրազրկված հատվածներ և կարող է լինել զգայուն երաշտի դեպքում: Հիմնական բնակավայրային տեսակները կիսաստվերային, բաց անցողիկ փայտահողը և անտառային հատվածներում հատկապես

ծայրերում, կաճաններում և այլն, որտեղ այս ծառը վերջիվերջո հանդիպում է որպես հազվադեպ ծառ: Նախնական տեսակների հաստատման մարտավարությունը իրականացվում է որպես առաջնային սերնդի հաստատում՝ սերմերի հավաքման, հնարավոր կերպով այս փուլին հաջորդում է մեծ վեգետատիվ աճը՝ արմատային համակարգի խորացմամբ: Իր թավուտ և խորացման հնարավորությամբ, ինչպես նաև իր արագ երիտասարդ աճով, կեռասենին ցուցաբերում է մրցակցային առավելություններ վաղ շրջաններում: Իր եվրոպական հիմնական սպառման շրջաններում, անտառաներում հազվադեպ հանդիպող տարր է, օրինակ կիրճային անտառները,



կաղնային անտառները և այլն:

Ինչպես օգտագործել կեռասենին

Ավանդապես կեռասենին տնկվում էր իր պտուղների և փայտի համար, ինչը հետագայում օգտագործվում էր

փայտից հովհանոցներ և այլ իրերի պատրաստման համար: Կաշուն խեժը համարվում էր, որ օժանդակում էր լավ մաշկին և տեսողությանը, ինչպես նաև օգնում էր բուժել հազը:

Այսօր կեռասենու փայտը օգտագործվում է դեկորատիվ կահույքի համար: Փայտը պինդ է, ամուր և մեղրի գույնի ու կարող է փայլեցվել լավ բաց դարչնագույնի: Վայրի բալենին ունի տարբեր մշակաբույսեր ու հայտնի դեկորատիվ ծառ է այգիներում: Փայտը այրվում է լավ և արտադրում քաղցր ծուխ, որը նման է ծաղիկերի հոտին:

Միմրուիզմ


Լեռնային էպոսներում, վայրի կեռասենին ունի միատիկ որակավորումներ և թեկուզ մեկ ծառին հանդիպելը համարվում էր հաջողության նշան: Մինտոիզմում համարվում է, որ սակուրայի ծաղիկները մահացած նախնիների հոգիներն են, իսկ ամուր կորիզի խորքում թաքնված է նոր կյանքը: Քրիստոնեական մշակույթում կեռասը համարվում է ուրախ կյանքի խորհրդանիշ, դրախտային պտուղ:

Մեր հայրենիքում ստացվել և մշակվում են կեռասի բազմաթիվ հիբրիդային տեսակներ՝ դեղին, վարդագույն, մուգ կարմիր, սև պտուղներով: Կեռասն ունի բարձր սննդային արժեք, բուժիչ հատկություններ, հետաքրքրություն է առաջացնում որպես պուրակային

ծառատեսակ: Ապացուցված է, որ կեռասենին հայտնի է եղել ութ հազարամյակ առաջ: Այն հանդիպում է բնության մեջ: Հնագույն ժամանակներում համարվել է, որ կեռասենու ծաղիկը երազի մեջ երջանկության նշան է, իսկ կեռասի բերք հավաքելը՝ հաջողության:

Կեռասի օգտակար հատկությունները

Կեռասենին պարունակում է մինչև 11,5 տոկոս շաքար, 1,33 տոկոս օրգանական թթուներ, 1 տոկոս ազոտային նյութեր, բջջանյութ, մոխիր, ներկանյութ, հարուստ է կալիումով եւ երկաթով, պարունակում է նաեւ կալցիում, մագնիում, ֆոսֆոր, այլ միկրոտարրեր: 100 գ պտղամսի մեջ պարունակվում է 0,01 մգ B1, B2 վիտամիններ, 0,4 մգ նիացին, 15 մգ ասկորբինաթթու, 0,3 մգ վիտամին E, ռուտին: Կորիզը պարունակում է 28 տոկոս պրոտեիններ և 30 տոկոս ճարպեր: Կեղևը պարունակում է մեծ քանակությամբ դափաղանյութ և ներկանյութ: Արժեքավոր է կեռասի խեժը, այն հարուստ է արաբինով:



Տերևներում պարունակվում է մեծ քանակությամբ ասկորբինաթթու:

Բալենու համեմատ՝ կեռասենու պտուղներն ավելի հարուստ են կարոտինով և երկաթով, սակայն զիջում են ֆոլիաթթվի, B խմբի վիտամինների քանակությամբ: Ավանդական բժշկությունը խորհուրդ է տալիս բուժական նպատակներով օգտագործել կեռասենու պտուղները աղեստամոքսային հիվանդությունների, անեմիայի, իսկ տերևներն ու ծաղիկները՝ մրսածության դեպքում: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում են կեռասենու պտուղները, պտղակոթերը, տերևը, բողբոջը, ծաղիկները և արմատը: Խորհուրդ է տրվում կեռասն ընդգրկել երեխաների սննդի մեջ: Ի տարբերություն բալենու պտուղների՝ օգտակար է բարձր թթվայնությամբ ստամոքսաբորբի, 12-մատնյա աղիի, ստամոքսի խոցի դեպքում:



Ամերիկացի հոգեբանների ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ կեռասի պտուղների սիրահարներն ունեն հանգիստ և բարի բնավորություն: Գիտնականները հաստատել են

նան, որ եթե մարդ ամեն օր՝ առավոտյան և երեկոյան, ուտի մի քանի հատիկ կեռաս (թարմ կամ պահածո), ապա զգալիորեն կնվազի սրտի հիվանդությունների վտանգը: Վիտամին A-ի բարձր պարունակության շնորհիվ կեռասի պտուղներն օգտակար են մաշկին, դրանց օգտագործումը պահպանում է մաշկը արևի ճառագայթների վնասակար ազդեցությունից: Վիտամին A-ի պարունակությունը բաց գույնի պտուղներում ավելի մեծ է: Կեռասի բերքահավաքը կատարվում է պտղակոթով, որպեսզի հնարավոր լինի որոշ ժամանակ պահպանել, ինչպես նաև՝ բնական հյութի կորուստ չառաջանա:

Կարևորությունն ու օգտագործումը: Վայրի բալը հազարավոր տարիներ շարունակ եղել է մարդկային սննդի աղբյուր: Այսօր այն մշակվում է որպես մրգային ծառ բարեխառն տարածքներում ամբողջ աշխարհում: Բացի մարդկային սնունդ լինելուց, նրա մշակված ենթատեսակներով հանդերձ, կեռասենու ծառը հանդիսանում է եվրոպական ամենակարևոր ծառերից մեկը՝ արժեքավոր ամուր և խիտ փայտ, որը նաև օգտագործվում է երաժշտական գործիքների պատրաստման համար:

Այսօր փայտանյութային արտադրությունը հիմնական սպառողն է վայրի բալի ծառը: Բացի իր օգտագործումից որպես դիզայներական ծառ, այս ծառը նաև համարվում է կարևոր սննդի աղբյուր թռչունների շատ տեսակների համար և

միջատների: Վայրի բալի տարածման շրջանները և անգամ իր համապատասխան ագրոանտառապահության հնարավոր շրջանը համընկնում է Եվրոպայի բարձր երոզիականության մակարդակի հետ, ինչպիսին եվրոպական լեռնային համակարգն է: Կողմնակի արմատները համապատասխանում են խորը ամրապնդմանը և հողի ուժեղացման խորացմանը, ինչպես նաև հողի բիոինժինեռիային՝ մեծացնելու համար լանջերի կայունությունը և երոզիայի մեղմացումը:

Կեռասենին Հայաստանում

Հողակլիմայական պայմանների նկատմամբ պահանջկոտ չլինելու շնորհիվ բալենին ամենատարածված պտղատու կուլտուրաներից է: Հայաստանում մշակվում է հյուսիսում և հարավարևելյան շրջաններում, Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում: Մշակվող սորտերից են՝ Դրոգանա դեղինը, Դենիսենի դեղինը, Մեթաթարականը, Սև Նապոլեոնը: Հայաստանի տեղական սորտերից են Քանաքեռի կեռասը, Սպիտակենին, Կարմիրկենին:



Ցրտադիմացկուն է, վաղ պտղաբերող, լավ խնամքի պայմաններում ամեն տարի առատ բերք է տալիս, պտղաբերում 3-4 տարեկանից: Կարող է աճել ծովի մակերևույթից մինչև 2000 մ բարձրության վրա: Այդ իսկ պատճառով պտուղների հասունացումը երկարաձգվում է 2,5-3 ամիս: Արարատյան դաշտավայրի պայմաններում պտուղները հասունանում են մայիսի 20-ից մինչև հուլիսի 20-ը, նախալեռնային գոտու՝ Արովյանի, Աշտարակի, Նոյեմբերյանի շրջաններում՝ հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 5-ը, իսկ լեռնային գոտում՝ Սևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի, Սիսիանի, Ստեփանավանի շրջաններում՝ հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 30-ը: Կեռասենու պտուղները գնահատվում են իրենց վաղահասությամբ,

տեխնոլոգիական և սննդային բարձր հատկանիշներով: Բալից մուրաբա, կոմպոտ և չիր են պատրաստում: Առավել տարածված են 4-ը՝ սովորական կամ թթու, տափաստանային, թավոտ և ավազաբալենի: Մշակվող սորտերի մեծ մասն ստացվել է առաջին 2 տեսակներից:

ՀՀ-ում հայտնի են 3 վայրի տեսակներ՝ մահալեբյան, մանրապտուղ և ալեհեր: Մշակվում է սովորական բալենին: Տեղական սորտերը հատուկ անուններ չունեն, կոչվում են իրենց աճման վայրի անունով, այն է՝ Երևանի, Մեղրիի, Քանաքեռի, Սիսիանի և այլն: Նկարագրենք սորտերից մի քանիսը. **Պաղբելսկայա:** Բալենու ստանադարտ սորտ է: Ծառը ուժեղ աճող է՝ ցածր բնով: Սաղարթը կլորավուն է, խիտ, ճյուղերով: Պտուղները խոշոր են, մսոտ (4-6գ) կլորավուն հարթ մակերեսով: Մաշկը փայլուն է, միջակ ամրության: Ծառը կարող է տալ մինչև 64կգ պտուղ: Հասունանում է հունիսի 12-20-ը: Լավագույն փոշոտիչներն են Անատոլսկայա, Լյուբսկայա, Սիսիանի սորտերը:

Շուբինկա: Բալենու տարածված սորտ է: Ծառի բարձրությունը 4-5մ է: Սաղարթը կլոր է, պտուղները միջին մեծության 2-3գ, պտղամաշկը բարակ, փայլուն, կարմիր գույնի: Բազմացվում է պատվաստի և մացառի միջոցով: Պտուղները հասունանում են հուլիսի երկրորդ կեսին, օգոստոսի սկզբին: Ծառերը պտղաբերում են 3-4 տարեկանում: Միջին բերքը՝ 10-12 կգ,



պտուղները բարձրորակ են, օգտագործվում է ոչ միայն որպես սեղանի սորտ այլև պատրաստում են բարձրորակ մուրաբաներ: Վլոդիմիրսկայա: Ծառերի բարձրությունը 3-3,5 մ է, սաղարթը՝ կլոր: Պտուղները միջին մեծության են՝ 3 գ քաշով, պտղամաշկը մուգ կարմիր, գրեթե սև գույնի, փայլուն, պինդ: Բազմացվում են պատվաստի և մացառի միջոցով: Պտուղները հասունանում են հուլիսի վերջին, շատ բարձրորակ են:

Միսիանի: Կեռասենու տարածված սորտ է: Զանգեզուրում ծառը մեծ է, ուժեղ աճող՝ 4-5մ բարձրությամբ: Պտուղները բավականին մեծ են՝ 6-8գ տափակ կլորավուն: Մաշկը բարակ է պինդ, մուգ կարմիր, հասունացման ժամանակ համարյա սև: Բազմացվում է մացառներով: Ցրտադիմացկուն է, մշակվում է ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա: Բարձր բերքատու է: Պտուղները վաղամիջահաս: Գարնանը, բողբոջների ուռչելու շրջանում, մոնիլիալ այրվածքի, ծակոտկեն բծավորության դեմ պայքարելու համար ծառերը սրսկել 1% բորդոյան հեղուկով: Պսակաթերթերի թափվելուց անմիջապես հետո, նույն հիվանդությունների դեմ սրսկել 1% բորդոյան հեղուկով: Լվիճների դեմ, պայքարի անհրաժեշտության դեպքում, կատարել առանձին սրսկում անթիոյի 0.1% էմուլսիայով: Բալենու ճանճի թռիչքից 10-12 օր հետո, կեռասի պտղալիցի շրջանում սրսկել անթիոյի 0.15% կամ ռովիկուրտի 0.04% էմուլսիայով: Այս սրսկումները

միաժամանակ նպաստում են բալենու լորձնոտ սդոցողի քանակության նվազեցմանը:

Կեռասենու պտուղները գնահատվում են իրենց վաղահասությամբ, տեխնոլոգիական և սննդային բարձր հատկանիշներով: Բալից մուրաբա, կոմպոտ և չիր են պատրաստում: Առավել տարածված են 4-ը՝ սովորական կամ թթու, տափաստանային, թավոտ և ավազաբալենի: Մշակվող սորտերի մեծ մասն ստացվել է առաջին 2 տեսակներից: ՀՀ-ում հայտնի են բալենու 3 վայրի տեսակներ՝ մահալեբյան, մանրապտուղ և ալեհեր: Մշակվում է սովորական կեռասենին: Տեղական սորտերը հատուկ անուններ չունեն, կոչվում են իրենց աճման վայրի անունով, այն է՝ Երևանի, Մեղրիի, Քանաքեռի, Միսի անի և այլն:

Վլոդիմիրսկայա:

Ծառերի



բարձրությունը 3-3.5մ, սաղարթը կլոր է: Պտուղները միջին մեծության են՝ 3գ քաշով, պտղամաշկը մուգ կարմիր, գրեթե սև գույնի, փայլուն, պինդ: Բազմացվում են հուլիսի վերջին, շատ բարձրորակ են:



Կեռասենու հայտնի սորտեր.
աղելինա, ալկարմիր, անուշկա,
արիադնան, թվաշյա, բրյանսկ
վարդագույն, վալերի չկալովի,
դադստանի շուտ, ադանդեր, դոլորես,
կովկասյան:

Կեռասենու բնութագրման
գենետիկական ռեսուրսները ներկայիս
Թուրքիայի տարածքում կարող են
օգնել հասկանալու նրանց
օգտագործումը բազմացման
ծրագրերում համաշխարհային
մակարդակով, քանի որ այդ
տարածաշրջանը համարվում է
կեռասենու հայրենիքը: Մալաթիայի
շրջանում կեռասենու պտուղները
հավաքվում են ապրիլ-մայիս
ամիսներից, թարմ կամ չորացված
վիճակում՝ հետագա օգտագործման
նպատակներով: Կեռասենու
բաղադրություններն օգտագործվել են
որպես ավանդական բուսական
դեղամիջոցներ՝ տարբեր
հիվանդությունների համար: Այս
բաղադրիչները հայտնի են որպես

անտիօքսիդանտ ազդեցություն
ունեցողներ: Այնուամենայնիվ,
կեռասենու բաղադրիչների
միջնորդված անտիօքսիդանտ
ազդեցությունները մնում են անհայտ:
Ուսումնասիրություններից մեկը հենց
Մալաթիայում, պարզ դարձրեց
կեռասենու մեթանոլի ազդեցությունը և
ուսումնասիրված անտիօքսիդանտ
հնարավորություններն ու ԴԼԹ-ի
վնասների պաշտպանության
կարողությունը: Այս մզվածքների
անտիօքսիդանտ
հանրավորությունները գնահատվեցին՝
օգտագործելով տարբեր
անտիօքսիդանտ թեստեր, ներառյալ
նվազված ուժը, ազատ ռադիկալ
հավաքումը, ջրածնի պերօքսիդի



հավաքումը և այլն:

Վայրի բնության մեջ կեռասենու դերը

Գարնանային ծաղիկներն
հանդիսանում են նեկտարի վաղ
աղբյուր և մեղուների համար
փոշոտման բույն, մինչ բալերը
հանդիսանում են թռչունների համար

սննդի աղբյուր, ներառյալ մի շարք անհետացող տեսակների, ինչպես նաև այնպիսի կաթնասունների, ինչպիսիք են՝ փորսուղը, անտառային մկնիկը, դեղնավիզ մուկը և այլն:

Տերևները թրթուրների համար սննդի աղբյուր են, ինչպես նաև ցեցերի մի շարք տեսակների համար:

Վտանգներն ու հիվանդությունները

Վայրի բալենին խոցելի է բակտերիաների նկատմամբ, ինչը կարող է աղավաղել և վերջնականապես սպանել վնասված ծառին: Տարվա սխալ ժամանակին պատվաստելը կարող է ծառերին վնաս պատճառել, անգամ արծաթյա տերևների հիվանդությունը, որը կարող է վերջնականապես սպանել ծառին: Մահվան կարող է հանգեցնել բալենու սև ճանճի վնասները՝ *Myzus cerasi*:

Prunus Avium-ը ունի համեմատաբար ծանծաղ արմատային համակարգ՝ հողի վերին հորիզոններում երկար գնացող կողային արմատներ, մատուցելով այն խոցելի քամու քշումներին: Հավելյալ, այն համեմատաբար զգայուն է շրջակա ստրեսներին և ոչ բարենպաստ պայմանների նկատմամբ, այսպիսով այն կարող է հանդիսանալ շատ վնասատուների և հիվանդությունների թիրախ: Արմատները կարող են հարձակման ենթարկվել մկների կողմից, իսկ տերևները թրթուրների և ձմեռային ցեցերի կողմից: Ինչպես այլ շատ *Prunus*-ի ծառատեսակների,

կեռասենին նույնպես զգայուն է ցեցերի նկատմամբ: Երիտասարդ կեռասենիները հատկապես խոցելի են սմբակային բուսակերների հարձակումների նկատմամբ:

Կլոններն ու կլոնային խառնուրդները: Կլոնները հանգեցնում են մարտավարության, որն ուղղված է ամենալավ սելեկցիոն գենոտիպին: Վերջինս կարող է սահմանվել որպես այն ինդիվիդուալները բնակչության մեջ, ովքեր ունեն բնակչության ստանդարտից ավելի քան 2.5 ստանդարտային շեղում: Կլոնային տեսակների փաստարկները և կլոնային անտառները զանազան են՝

1. հետաքրքրությունների առանձնահատկությունների գենետիկ ձեռքբերումը դեռևս գերազանցում է այն, ինչը հնարավոր է սերմերի այգիների վրա հիմնված ծրագրի համար նույն ժամանակահատվածում,

2. կոնտրաստային գենոտիպերը կարող են խառնվել՝ մեծացնելու գենետիկ բազմազանության ամրապնդումը և նպաստելու բնակչության կողմից կլիմայական կամ կենսաբանական փոփոխություններին դիմակայելու համար:

Կեռասենու պարագայում, բարձր որակի կլոնները կարող են տեղակայվել արագորեն մեծ թվաքանակով՝ անտառային պրակտիկ օգտագործման նպատակով և ներկայումս ամբողջապես գործունակ են: Սա ավելի արդյունավետ է, քան այն ինչին կարելի է հասնել “ավանդական” բազմացման ռազմավարության

Աղապտացիոն մարտավարությունը կլիմայական փոփոխությունների պայմաններում:

Կեռասենին բարեխառն տեսակ է, որի հիմնական էկոլոգիական պահանջները կապված են բարեխառն շրջանի հետ (սակայն ծաղկումը, սերմային բողբոջումը կախված է ջերմասիճանից) և ջրի մատակարարումը (հատկապես ամռանը): Կլիման կփոխվի անընդհատ, և ամենալավատես սցենարը՝ հիմնված քաղաքական և սոցիալական փոփոխությունների վրա, ամենահնարավորն է: Անգամ, եթե ապագա կլիմայական մոդելները կարող են գծվել եղանակի և խոնավության կտրուկ փոփոխությունների ֆոնի վրա, ապագա իրավիճակը մեծապես անհայտ է: Ուսումնասիրելով մի շարք ուղղություններ՝ հիմնական խնդիրը պետք է լինի հավաքելու մաքսիմում հարմարվողականություն: Անտառային նյութերի վերանայումը կտա հնարավորություն՝ մեծացնելու դրա հարմարվողականության ներուժը ապագայի համար:




միջոցով՝ հենվելով սելեկցիայի, սերմի այգային ստեղծման և սերմի մասայական արտադրության վրա: Այս առավելությունները ոգեշնչում են Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի այգեգործներին՝ զարգացնելու և տեղակայելու կեռասենու կլոներին կամ կլոնային խառնուրդներին:

Այս մարտահրավերը դեռևս չի հասցեագրվել կեռասենու համար: Միջազգային ցանցերը՝ ստնդարտային կլոներով ստեղծել են մրգային տեսակներ, որոնք կարող են կեռասենու համար խնդիր լինել: Գենետիկական բազմազանությունը՝ սառեցված միավորների քանակի համար կարիք ունի ազդելու բողբոջի

հանգստության վրա, ինչպես նա
բողբոջի ծաղկման, կարևոր է նաև
չորադիմացկունության ավելացման
վրա ազդեցությունը:

**Հիմնական հետաքրքրությունն ու
կեռասենու փայտի արտադրությունը:**
Վայրի բալենու ներկայությունը



անտառներում միշտ եղել է
ուշադրության կենտրոնում
անտառապահների կողմից, ի շնորհիվ
կենդանիներին սնելու իր
կարևորությանը: Այնուամենայնիվ,
քանի որ կաղնին և հաճաբենին ունեն
ավելի երկար ռոտացիոն շրջան, բարձր
անտառները ամենալավ տեղը չէին
կեռասենու համար: Այսօր կեռասենու
դերը բարելավելն է անտառի
էկոհամակարգը և տերերը տեղյակ են,
որ ունենալով լավ ֆենոտիպներ ամեն
հեկտարում իրենց անտառում կարող է

մեծացնել փայտանյութի
կենսազանգվածի ընդհանուր արժեքը:
Վերջին 20-25 տարիներին, վայրի
բալենին լայնորեն օգտագործվել է՝
զարգացնելու համար ինտենսիվ
անտառապահության ծրագրերը: Այս
պլանային գործողությունների չափերը
լայն էին, հաշվի առնելով հարյուր
հազարավոր հեկտարներ Եվրոպայում:
Իտալիայում, ֆիսկալ ստատիստիկան
ցույց է տվել, որ 150.000 հա տնկված
ծառերը 15 տարում (որտեղ կեռասենին
զբաղեցնում է երկրորդ տեղը
ընկուզենուց հետո) նրանք երկուսն էլ
զբաղեցնում են տնկված տարածքի
80%: Երեք հիմնական
մարտավարություններ են զարգացվել
Եվրոպայով մեկ կեռասենու
օգտագործման համար. անտառների
հարստացում, ինտենսիվ
անտառային ծառատունկ, որն
ուղղված է ավելի արագ աճեցնելու
ծառերը և ավելի լավ երանգներով ու
վերջապես ժամանակակից
ագրոանտառապահությունը ազնիվ
փայտից, որը վերջերս է զարգացել՝
օգտագործելով կեռասենին որպես
նպատակային տեսակ: Այս
շահագործումները պատասխանում են
տարածքում ներդրումների տարբեր
ինտենսիվություններին, տարբեր
մշակութային ընտրություններին,
ինչպես նաև տարբեր կարիքների կամ
էկոլոգիական խնդիրների նկատմամբ
զգայունություն՝ տարածքի մենեջմենթի
հարցում:

Դրան հավելած ժամանակագրական
հաջորդականությունը նախատեսվում
է լինել փաթեթում

մարտավարությունների մեջ: Նման կերպ կենսաբանական բազմազանությունը և ապահովությունը՝ արհեստական էկոհամակարգի բարելաված են: Վերջերս, տեխնիկաները անտառների հարստացման համար զարգացել են մի շարք երկրներում, բարելավելու և հարստացնելու համար նրանցից եկող շահույթը: Որոշ երկրներում, համակարգերը, որոնք հաշվում են կանգնած ծառերի և փայտանյութերի տնտեսական արժեքը հաշվվում էր երկար տարիների ընթացքում՝ ցույց տալով այս տեսակի նկատմամբ իսկական հետաքրքրությունը: Տարածքները, որոնք նախատեսված են կեռասենու և այլ արժեքավոր ծառերի տնկման համար, ինչպես նաև սնուցման համակարգի համար, ցույց տվեցին պարզորեն, որ բուծողների և բարելավողների դերը կենտրոնական է անտառային վերարտադրողական նյութերի մատակարարման համար, որոնք կարող են հասնել օպտիմալ համագործակցության շրջապատի նկատմամբ և մշակման տեխնիկաների հետ: Արժեքավոր փայտի այս ամբողջական արտադրական համակարգը ներառում է մեծ քանակով աշխատողներ, պրոֆեսիոնալներ և ուսումնասիրողներ, և շահութաբեր է ոչ միայն տնտեսական կողմից, այլև էկոլոգիական:

Կեռասենու բուծումը: Եվրոպայում իր ինտենսիվ արտադրության պայմաններում կեռասենու փայտը սակավ էր սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից: Այս ժամանակ Եվրոպայում

իրականացվում էին առաջին դասի որակի ծառերի հատումներ (սկզբից արևմտյան, իսկ հետագայում արևելյան Եվրոպայում): Մեկ այլ կարևոր



փայտանյութի աղբյուր, այսպես կոչված “վայրի բալենին”, *Prunus serotin*-ան է Ամերիկայից: Անտառային վերարտադրության նյութերի հստակեցումն ու գրանցումն ապահովելը վայրի բալենու համար դարձան անհրաժեշտ, երբ պլանտացիաների վերացումը, որն իրականացված էր վայրի բալենու փայտի նկատմամբ մեծ հետաքրքրությունից ելնելով, սկսեց դառնալ կարևոր:

Սրան զուգահեռ մասնավոր ընկերությունները ցույց տվեցին հետաքրքրություն ազնիվ փայտերի նկատմամբ, ներառյալ կեռասենին: Նրանց նպատակն է արտադրել մեծ

քանակությամբ բարձր որակի փայտ կարճ ժամանակահատվածում՝ ակնկալելով մեծ և աճող պահանջը տեղական փայտի նկատմամբ կահույքի արադրությունում ապագա տարիներին: Այս խնդիրները կարող են լուծվել հողերի նպաստավոր պայմաններից ելնելով, համապատասխան ինտենսիվ ծառերի մշակությամբ և բարձր որակի գենոտիպերով: Մշակման ծրագրերը սկսել են Եվրոպայում դեռևս 1960-



Հունգարիայից մեծ դժվարությամբ: Իր յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրա բողբոջները ուռուցիկ են, արմատակալը դրսից է, որը հնարավորություն է տալիս դիմակայել խոնավ եղանակներին: Գերադասելի է այս տեսակի արմատակալը: Ներկայումս այն աճեցվում է բոլոր



ականներից (Նորվեգիա) մինչև 1990-ականներ (Սլովակիա և Շվեդիա):

...

Նման օրինակով հնարավոր է զարգացնել ծառերի քանակի աճը նաև Հայաստանում: Ներկայումս Հայաստանում նկատվում է կեռասենու ծառերի աճ, չնայած նրանք պատկանում են այլ սորտերի, որոնցից մեկը իրեն արդարացրել է և հանդիսանում է առաջատարներից մեկը՝ հունգարական կեռաս՝ եզան աչք: Այս սորտը Հայաստան է բերվել

շրջաններում: Այս տեսակը տալիս է մեծ քանակությամբ բերք, որի հիմնական սպառող հանդիսանում է ոչ թե տեղական շուկան, այլ արտահանվում է Ռուսաստան: Սակայն դրա հետ մեկտեղ գյուղացին ունի մեծ խնդիր անորակ դեղորայքի, ոռոգման հետ կապված, որոնք հանդիսանում են կեռասենու բերքի համապատասխանաբար մեծ քանակի ապահովման խոչընդոտները:

Չնայած դրան կեռասենին համարվում է գարնան առաջին միրգը, որը ծաղկում

է և ազդարարում գարնան գալուստը:
Արմավիրի մարզում հատկապես մեծ
ուշադրություն է հատկացվում այս
ծառատեսակին, իսկ տեղաբնիկների
համոզմամբ կենսասնու
գեղեցկությանը ոչինչ չի հասնի: ¹

¹ Այս հրատարակությունը (խմբագրությունը)
ներկայացնում է <<Հայաստանի գյուղական
համայնքներում ագրոկենսաբազմազանության
պահպանության և օգտագործման միջոցով
կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների
մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ)
կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է
Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի
շրջակա միջավայրի ծրագրի իրականացման
աջակցությամբ (UNEP):